Առրպատականի առաջնորդ է ընտրուել Ս. Էջմիածնի միաբան գերապատիւ Բարդուղիմէոս եպիսկոպոսը։

Մայր Աթոռոյս իրենց պաշտօնավայրն ուղևորուեցին Կիւրեղ և Թովմա վարդապետները, որոնցից առաջինը նշանակուած է Աղէքսանդրապոլի, իսկ միւսը Հին Նախիջևանի փոխանորդ։

ՏԱՃԿԱՀԱՅՊ

Արևելքից տեղեկանում ենք, որ Երուսաղէմի հ. Վանքի ելևմտից նախկին տեսուչ Ղևոնդ վարդապետ Մագուտեանը հեռագրով կանչուած է Պոլիս։ Նոյն Վանքի ելևմտից նոր տեսուչ Մատթէոս վարդապետ Գայլրդճեանը մի տեղեկագիր է ներկայացրել ս. Պատրիարքին, որի մէջ նկարագրել է իւր նախորդի՝ Ղևոնդ վարդապետի գործունէութիւնը։ «Աղէքսանդրիոյ հողի վաճառումից գոյացած դրամի մէկ մասը՝ 6000 ոսկու չափ Ղևոնդ վարդապետ բեռոդին վճարելի բաց պօնոյի մը փոխարէն, յանձնած էր Ցունաց Վանքին և մի քանի ամիս առաջ վերուցեր է այն տեղէն, և հիմա կըսէ եղեր, թէ «շինութեանց գործածեց»։ Բոլոր իրեն յանձնուած որոշ գումարներու համար կըսէ, թէ «շինութեանց գործածեց»։ բայց այս շինութեանց փոխարէն տակաւին խոշոր պարտքեր կան, և Վանքը խիստ փոքր մաս մը միայն կընդունի Ղևոնդ վարդապետի ձեռամբ կատարուած շինութեանց եկամուտէն։ Մատթէոս վարդապետի տեղեկագրէն կ'երևի թէ այս «շինութիւնք» յատկապէս ստեղծուած պատրուակ մ'էին ղեղծումները պարտկելու»։

Արարատի անցեալ տարուայ համարներից մինում մենք տպագրեցինք Երուսաղէմից ստացուած մի թղթակցութիւն ի պաշտպանութիւն ս. Ղևոնդ վարդապետի, թէև ստացանք երկու հերքում լոյս տեսած յօդուածի դէմ, բայց տարաբաղդաբար տպագրելու հնարաւորութիւն չունեցանք։ Եթէ հաստատ

են վերոյիշեալ մեղադրանքները, մեզ մնում է միայն ցաւել, որ ի չարն է գործ դրուել մեր հեռաւորութիւնն ու գործին անտեղեակ լինելը։

Պոլսոյ կրօնական ժողովը կարգալոյծ է արել Քղեցի Խորէն քահանային։

Երզնկայի առաջնորդ է ընտրուել Տէր Կորիւն վարդապետ Էլլիտիրէմեանը։

Արևելքի մէջ կարդում ենք.—

Պողոս փաշա Նուբար, ի յիշատակ իր 15 ամեայ վաղամեռիկ զաւակին՝ Աղան Նուպարի, որ ուսանող էր Ֆրանսայի մէջ և յանկարծամահ եղած է, 10,000 ֆրանկ նուիրեր է Փարիզի Հայոց եկեղեցիին, 8000 ֆրանկ Փարիզի աղքատասիրական մարմնոյն և 2000 ֆրանկ ալ աղքատներուն։ Ընդհանուր գումարը կը հասնի հազար ֆրանսական ոսկիի։

Կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսը գիմում ըրած է Պատրիարքարան՝ իրեն յանձնելու համար հոգեւոր Շահնազարեան վարդապետի կատարած գումարն, որ իբր աւանդ կմնայ և տարեկան տոկոսը կտացուի։ Ս. Կաթուղիկոսը ժառանգաւորաց Վարժարանի բացման ձեռնարկած ըլլալով, անոր մատակարարութեան համար պէտք ունի այդ գումարին, որուն տարեկան տոկոսն առ այդ պիտի յատկացնէ։

Եգիպտոսէն հաղորդում են, որ այնտեղի առաջնորդ է ընտրուել Սահակ եպիսկոպոս Այվազեանը՝ Սպահանի և Հնդկաստանի առաջնորդը, որի հաստատութեան համար արդէն դիմած են Վեհափառ Հայրապետին։